ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«11» հունվարի 2019 թվականի № 11-Հ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 175-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 9-ին արձակած թիվ 154-Ա հրամանով «Ջրառ» ՓԲ ընկերության տնօրենի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»:

«Ջրառ» ՓԲԸ-ն 2018 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ուղղված գրությամբ բողոքարկվել է Ջրային կոմիտեի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 9-ին արձակած թիվ 154-Ա հրամանը, որի արդյունքում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 175-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ: Կարգապահական տույժ նշանակելու համար հիմք հանդիսացած հանգամանքների հիմնավորվածությունը գնահատելու նպատակով վարույթն իրականացնող հանձնաժողովը որոշակի հարցադրումներով դիմել է վարույթի կողմերին: Վերջիններիս դիրքորոշումը ստանալով հանձնաժողովը տեղեկացել է, ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից «Արտաշատ» ՋՕ ընկերության սպասարկման տարածքում Մխչյան առաջին հերթի մղման խողովակաշարից ապօրինի միացումների վերաբերյալ հրապարակման հիման վրա հարուցվել է քրեական գործ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 220-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

Օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

Նույն օրենսգրքի 218-րդ հոդվածը սահմանում է աշխատանքային կարգապահության հասկացությունը, համաձայն որի՝ աշխատանքային

կարգապահությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի կանոններն են, որոնց պարտավոր են ենթարկվել բոլոր աշխատողները:

Հանձնաժողովը, ի հայտ եկած հանգամանքները քննարկելով, սակայն չանդրադառնալով գործի բուն էությանը՝ գտավ, որ սույն վարչական վարույթն ենթակա է կասեցման հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Արարատի մարզի դատախազության կողմից Խաչիկ Հակոբյանի ահազանգի հիման վրա նախապատրաստված նյութերով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի, 38-308-րդ հոդվածի 2-րդ մասի և 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով 2018 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 27202418 որոշմամբ հարուցված է քրեական գործ՝ «Արտաշատ» ՋՕ ընկերության սպասարկման տարածքում Մխչյան առաջին հերթի մղման խողովակաշարից ապօրինի միացումների վերաբերյալ, որի շրջանակներում ի թիվս այլ հանգամանքների քննության և բացահայտման է ենթակա նաև առկա իրավիճակում «Ջրառ» ՓԲԸ-ի տնօրենի մեղավորության հանգամանքը (հիմք ընդունելով Օրենսգրքի 220-րդ հոդվածը), որն առանցքային նշանակություն ունի վարչական վարույթի հետագա ընթացքն ապահովելու համար:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նախարարության ջրային կոմիտեի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 154-Ա հրամանով «Ջրառ» ՓԲ ընկերության տնօրենի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցը քննարկելու վերաբերյալ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 175-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կասեցնել՝ մինչև 2018 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 27202418 որոշմամբ հարուցված քրեական գործով կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Նախարարության իրավաբանական վարչությանը՝ եռօրյա ժամկետում ծանուցել կողմերին վարչական վարույթի կասեցման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

1/11/2019

X

VERIFIED OCSP 1/11/2019 20:07:06 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: VARDANYAN HAKOB 3914890533
/ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ